ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ «ՃԱՆԱՉՈՒՄ» ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

ԹԵՍԱ ՀՈՖՄԱՆ

Ցեղասպանության ճանաչման «Ճանաչում» հանձնախումբը պաշտոնապես կյանքի է կոչել 1999 թվականին, որի մասին ընթերցողը մանրամասնորեն կարող է տեղեկություններ գտնել ներքո ներկայացվող զեկույցում, որի հեղինակն է գիտնական և մարդու իրավունքների պաշտպան տիկին դոկտ. Թեսա Հոֆմանը: Տարիներ շարունակ նա պայքարում է հայ և այլ վտանգված ազգերի իրավունքները պաշտպանելու համար: Հատկապես անհրաժեշտ է նշել նրա ջանքերը և գործունեությունը Հայոց ցեղասպանությունը ճանաչելու, դատապարտելու և վնասները հատուցելու ուղղությամբ: Այդ ջանքերը Թեսա Հոֆմանը գործադրում է նաև այլ ժողովուրդների ցեղասպանությունը ճանաչելու և դատապարտելու հարցում:

Ցեղասպանության ճանաչման հարցում Գերմանիան առանձնանում է մյուս պետություններից, քանզի Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում նա եղել է Թուրքիայի դաշնակիցը: Կայսերական Գերմանիան լավատեղյակ էր հայերի բնաջնջման ու բռնագաղթի մասին իր իսկ դեսպանության և հյուպատոսությունների զեկուցագրերից, սակայն քաղաքական շահերից ելնելով ոչ միայն չէր բարձրանում իր բողոքի ձայնը, այլև Օսմանյան Թուրքիայում տեղի ունեցած ոճրագործության առնչությամբ մինչև անգամ զինվորական գրաքննություն էր անցկացնում: Փաստված են որոշ գերմանացի սպաների անմիջական մասնակցության դեպքեր՝ ի նպաստ տեղահանությանը դիմադրող հայ զինվորներին ընկճելու թուրքերի ջանքերի: Օսմանյան զինվորական պաշտոնյաները Բեռլին-Բաղդադ կառուցվող երկաթուղու կառավարությանը տրամադրում էին հազարավոր հայեր՝ որպես անվճար աշխատուժ: Աշխատանքի ավարտին՝ որպես կանոն, այդ մարդիկ հենց իրենց գերմանացի աշխատակիցների և նրանց պետերի աչքի առաջ՝ որոշ գերմանացիների բողոքներին հակառակ գնդակահարվում էին: Այս բոլորը լավ հայտնի էր գերմանացի պետական գործիչներին:

Դաշնակիցների հաղթանակից հետո մի շարք ոճրագործ և պատասխանատու երիտթուրքեր ուղղակի գերմանացիների օգնությամբ փախան և գերմանական իշխանավորների օգնությամբ ապաստան գտան Բեռլինում, թեպետ նրանցից ոմանք օսմանյան հատուկ ատյանների կողմից մահապատժի էին դատապարտվել՝ պատերազմական ոճրագործության և հայերի բնաջնջման մեղադրանքով:

Այսօր Գերմանիայի Դաշնային հանրապետությունը Թուրքիայի դաշնակիցն է ՆԱՏՕ-ում և նրա ամենամեծ զենք մատակարարողը: Գերմանիան օժանդակում է Թուրքիային տեխնիկապես, ֆինանսապես և միջնորդելով հովանավորում է Թուրքիայի անդամակցությունը Եվրամիությունում: Մյուս կողմից՝ առայժմ 2,5 միլիոնից ավել Թուրքիայի քաղաքացիներ (որոնցից 100000 քրիստոնյա հայեր, հույներ, ասորիներ ու արամեալեզու քրիստոնյաներ և, առնվազն, 40000՝ քրդեր) ապրում են Գերմանիայում՝ քանակի հարաճուն բարձրացումով: Ի համեմատություն նշենք, որ ներկայումս 30-40 հազար հայեր են ապրում այս երկրում (շուրջ 80%-ը Թուրքիայից և նախկին Արևմտահա

յաստանից):

Ի տարբերություն մյուս երկրների հայ համայնքների, որտեղ ցեղասպանության և Արցաքի խնդիրներն առաջնահերթ են, Գերմանիայի համայնքներում, դժբախտաբար, այդ խնդիրները կամ չեն արծարծվում, կամ՝ շատ հազվագյուտ են արծարծվում: Այնուամենայնիվ, ցեղասպանության ճանաչման և դատապարտման նախապատրաստական աշխատանքները, հասարակությանը պարզաբանելու ուղղությամբ, լավ են ընթացել: Եթե 10-15 տարի առաջ դժվարություն ունեինք բացատրելու հայերի ով լինելը, և կամ Հայոց ցեղասպանության իրողությունը, այսօր չունենք այդ հարցը: SPD-ի անդամ և Բունդեստագի արտաքին հարաբերությունների հանձնախմբի նախագահ Ուլրիխ Քլոզեն մեր հանդիպման ժամանակ (տիկին դոկտոր Թեսա Հոֆմանի ներկայությամբ), միանշանակ խոստովանեց, թե «մենք լավ գիտենք և թուրքերն էլ մեզ հետ, որ ցեղասպանությունն իրողություն է, այնուամենայնիվ, Բունդեստագը պատմաբանության ինստիտուտ չէ, որտեղ Հայոց ցեղասպանությունը՝ որպես այդպիսին, բնութագրվի» և խոսակցության ընթացքում կարծիք հայտնեց, որ «եթե Ամերիկայի Միացյալ Նահանգները ճանաչեն կամ դատապարտեն ցեղասպանությունը, ապա մյուս պետությունները կհետևեն»: Իմիջիայլոց, կուսակցությունների ղեկավարների հետ տեսակցությունները, որ տեղի էին ունենում ցդասպանության ճանաչման շրջանակում, լավ միջոց էր կողմնորոշվելու և ճշտելու մեր հետագա ռազմավարությունը:

«Կանաչները», խաբեցին՝ հակառակ իրենց խոստումին, բառիս բուն իմաստով հուսախաբեցին մեզ: CDU/SCU-ն բնավ չցանկացավ հանդիպել ցեղասպանության ճանաչման հանձնախմբի ներկայացուցիչներին: Միակ կուսակցությունը, այն էլ ոչ միատարր, PDS-ն էր (դեմկրատական սոցիալիստական կուսակցություն), որը հովանավորեց, որպեսզի ցեղասպանության ճանաչման խնդրագիրը մտնի Բունդեստագ: PDS-ն ընթացիկ նստաշրջանում Բունդեստագում պատգամավոր չունի: Այս իրադրության պայմաններում ցեղասպանության ճանաչման կամ դատապարտման գործընթացը, թվում է, դառնալու է երկարաշունչ հարց Գերմանիայում, սակայն դա սովորական երևույթ է մեր օրերում, եթե մտաբերենք, որ Ֆրանսիայում այն տևել է 30 տարի. իսկ ԱՄՆ-ո՞ւմ...

Մեզ մնում է միացյալ ուժերով բոլոր միջոցները գործի դնել, լավ կազմակերպվել, լինել համառ, պատրաստ լինել բոլոր նոր քաղաքական հոլովույթներին, լավ իմանալով, որ պատմությանը խորթ են «բնավ» և «հավիտենական» բառերը:

Դոկտոր Ժիրայր Քոչարյան

«ՃԱՆԱՉՈՒՄ» ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ
Ամփոփ տեսություն

«Ճանաչում» աշխատանքային խմբի համադրող
Թեսա Հոֆմանի ներկա զեկույցը կարդացվել է 2003թ. մայիսի 28-ին,
Բեռլինում կայացած «Ճանաչում» աշխատանքային խմբի
խորհրդաժողովում:

«Ճանաչում» աշխատանքային խմբի ծնունդը և նրա կազմը

Աշխատանքային խումբը ստեղծվեց 1999 թվականի ամռանը, չորս աշխատանքային կազմակերպությունների միավորման հիման վրա: Դրանք էին՝ «Հայկական հարցերի հաստատությունը», «Վտանգված ազգերի ընկերության» «Հայաստան» խումբը, «Տեղեկատվության և փաստաթղթերի հայկական կենտրոնը», «Գերմանիայի հայության կենտրոնական խորհուրդը»: Առաջին երեք կազմակեպությունների առանձնահատկությունն այն է, որ ստեղծման օրից նրանք հետապնդել են ազգային և միջազգային ատյանների կողմից ցեղասպանությունների ճանաչման և դատապարտման խնդիրը: Ինչ վերաբերում է «Գերմանիայի հայության կենտրոնական խորհրդին», ապա նա իր վրա վերցրեց տարբեր հասարակական հարցերով զբաղվելու պարտականությունը:

Համագործակցություն այլ կազմակերպությունների հետ

Գերմանիայի հայկական համայնքը բազմամարդ չէ, ունի 30000 անդամ: Ուստի նա այլ համայնքների, այդ թվում նաև՝ ոչ հայկական կազմակերպությունների պաշտպանության և համագործակցության կարիքն ունի: Այդ համագործակցությունն անհրաժեշտ է ոչ միայն մարտավարական, այլ նաև՝ նյութական տեսանկյունից:

Հայ ժողովուրդն իր դեմ կատարված հանցագործությունը ճանաչել տալու ու այն դատապարտելու իր ջանքերում որոնում է նույն ողբերգական ճակատագրին արժանացած այլ ժողովուրդների պաշտպանությունն ու նրանց հետ համագործակցելու ճանապարհները: Ցեղասպանության ուսումնասիրության միջազգային համբավ ունեցող մասնագետները, մասնավորապես, ամերիկյան պատմաբան Ռուդոլֆ Ռումելը, որը ցեղասպանության գիտության հիմնադիրն է, հանգում է այն եզրակացության, որ 1900 թվականից մինչև 1923 թվականը Թուրքիայի տարբեր վարչակարգերի կողմից ոչնչացվել են 3,5-4,3 միլիոն հայեր, հույներ, նեստորականներ և այլ քրիստոնյաներ: «Ճանաչում» աշխատանքային խումբը հակված է 3 միլիոն զոհերի թվին, այդ թվում՝ 1,5 միլիոն հայեր՝ 1915-1916թթ., Փոքր Ասիայի մեկ միլիոն հույներ՝ 1912-1922թթ., և 0,5 միլիոն արամեալեզու քրիստոնյաներ՝ 1914-1918թթ.:

Այս ժողովուրդների հետ համագործակցությունը հայերի համար շատ ավելի արդյունավետ է, քան, օրինակ, համագործակցությունը Գերմանիայի հրեական միությունների հետ, քանի որ այս ուղղությամբ Գերմանիայի հայերի բոլոր ջանքերը մինչև օրս անցնում են ապարդյուն:

«Ճանաչում» աշխատանքային խումբն իր հիմնադրման օրից սերտորեն համագործակցում է «Ցեղասպանության հակառակորդների ընկերության» հետ, որը 1999 թվականին Թուրքիայի Ազգային ժողովին

ներկայացրեց 11000 հոգու կողմից ներկայացված մի բողոքագիր, որը պահանջում էր որպես ցեղասպանություն ճանաչել հայերի դեմ գործած հանցագործությունը: Այդ բողոքագիրը Անկարայից հետ վերադարձվեց՝ առանց ծրարը բացելու: «Ցեղասպանության հակառակորդների ընկերությունը» որոշեց այդ բողոքագիրն ուղարկել Գերմանիայի, Շվեյցարիայի, Ավստրիայի, Հոլանդիայի և Ֆրանսիայի պառլամենտներին, ինչպես նաև Եվրոպական խորհրդարանի նախագահ Պատ Քոքսին:

Մեր աշխատանքները

«Ճանաչում» աշխատանքային խումբը Գերմանիայի Բունդեստագի անդամներին հղեց մի հանրագիր, հետևյալ երկու պահանջներով.

1. ճանաչել Հայոց ցեղսպանության փաստը,

2. պահանջել Թուրքիայի կառավարությունից և օրենսդիր մարմնից ճանաչել Հայոց ցեղասպանությունը:

Մեր տարի անց, 2001 թվականի ապրիլի 4-ին Գերմանիայի պառլամենտի բողոքագրերի հանձնաժողովն ըմբռնումով մոտեցավ Հայոց ցեղասպանությանը վերաբերող բողոքին, սակայն խուսափեց այդ հարցի պառլամենտական քննարկումից:

Բողոքագրերի հանձնաժողովի երաշխավորագրի մեջ ասված էր.

«Հանրագրերի հանձնաժողովը քաջ գիտակցում է, թե որքան մեծ նշանակություն ունեն հայ ժողովրդի ինքնագիտակցության համար 1915-1917 թվականների իրադարձությունները: Անհրաժեշտ է տեղի ունեցածի վերագնահատում՝ Թուրքիայի և Հայաստանի միջև ամուր փոխհասկացություն ստեղծելու համար: Հանրագրերի հանձնաժողովը ողջունում է բոլոր նախաձեռնությունները, որոնք ուղղված են անցյալի գնահատականների վերանայմանը: Սակայն անհրաժեշտ է հաշվի առնել, որ վերքերը պետք է բուժել, ոչ թե կտրել: Ելնելով դրանից, հանձնաժողովը համարում է, որ հանրագրի մեջ բերված առաջարկություններն այն ձևով, ինչպես նրանք շարադրված են, նպատակահարմար չեն, քանզի գոյություն ունեցող դժվարությունների հաղթահարումը նախևառաջ Հայաստանի և Թուրքիայի գործն է: Այնուամենայնիվ, հանրագրերի հանձանժողովն ունի այն տեսակետը, որ Թուրքիայի և Գերմանիայի դիվանագիտական հարաբերությունների սահմաններում հնարավորության դեպքում պետք է արտահայտվի այն տեսակետը, որն ընդունելի է օսմանյան բնակչության մեծամասնության համար: Բացի դրանից, անհրաժեշտ է նշել, որ հանրագրերի հանձնաժողովը զբաղվել է այդ հարցով և առաջարկում է հանրագիրը որպես փաստաթուղթ հղել Դաշնակցային կառավարությանն ու Արտաքին գործոց նախարարությանը, նրանցից խնդրելով պատասխան 6 ամսվա ընթացքում»:

Սակայն տարբեր աղբյուրներից մեզ հայտնի դարձավ, որ հանրագրերի հանձնաժողովը ստացել է Արտաքին գործերի նախարարության պատասխանը, որի համաձայն ոչ պետական մակարդակով ցեղասպանության վերաբերյալ արդեն իսկ վարվում են թուրք-հայկական բանակցություններ: Այդ պատասխանը վրդովմունք առաջացրեց հանրագրերի հանձնաժողովի անդամների մոտ: Սակայն, ի զարմանս բոլորի, հանրագրերի հանձնաժողովը 2001թ. հուլիս ամսին բավարար է համարում Արտաքին գործերի նախարարության պատասխանը:

2001թ. հոկտեմբերի 10-ին «Ճանաչում» աշխատանքային խումբը

ստանում է հանրագրերի հանձնաժողովի նամակը, որտեղ նշված էր հետևյալը. «Այնուամենայնիվ, կարող եմ ձեզ հաղորդել, որ Դաշնակցային կառավարությունը և Արտաքին գործերի նախարարությունը հաշվի են առնում Բունդեստագի խնդրանքը [և որոշել] Գերմանա-թուրքական հարաբերությունների սահմաններում քննարկել հայ-թուրքական հարաբերությունները և աջակցություն ցուցաբերել հայ-թուրքական երկխոսությանը: Դրա հետ միասին պարզ է դառնում, որ այդ երկխոսությունը ոչ պետական մակարդակում արդեն սկսել է իր առաջին քայլերն ընդհանուր անցյալը վերանայելու ուղղությամբ»:

Եզրակացություն

1895 թվականից սկսած հայերի և արամեացիների ցեղասպանությունները Գերմանիայի Բունդեստագի քննարկմանը հանձնելու երեք փորձ է կատարվել, որից առաջինը՝ արամեացիների նախաձեռնությամբ, երկրորդը՝ ցեղասպանության մասնագետ պրոֆեսոր Գունար Հայսոնի կողմից, իսկ երրորդը՝ «Ճանաչում» աշխատանքային խմբի կողմից: Վերջինս իր նախորդների համեմատությամբ գնաց ավելի հեռուն: Հաջողվեց ոչ միայն ներկայացնել համապատասխան հանրագիր, այլև Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը բարձրացնել երկկողմ կառավարական բանակցությունների մակարդակին: Ընդ որում, գերմանական կողմը թուրքական կողմին տեղեկացրեց, որ Հայոց ցեղասպանությունը ճանաչելու հարցը «պաշտպանում է Գերմանիայի բնակչության մեծ մասը»:

Այն փաստը, որ այնուամենայնիվ մեզ չհաջողվեց կազմակերպել հարցի պառլամենտական քննարկում, երկու հետևյալ հանգամանքների հետևանք էր: Առաջինը՝ հայ-թուրքական «հաշտության» բանակցությունների գոյությունն էր, իսկ երկրորդը՝ 2001թ. սեպտեմբերին տեղի ունեցած ահաբեկչական արարքը, որի հետևանքով ԱՄՆ-ի կողմից ավելի մեծ նշանակության տրվեց Թուրքիայի ռազմավարական նշանակությանը ՆԱՏՕ-ի կազմում՝ Աֆղանստանի դեմ ԱՄՆ-ի մարտական գործողությունները ծավալելու իմաստով:

Ստորագրահավաք

Մեր հանրագիրը պաշտպանելու նկատառումով մենք կազմակերպեցինք ստորագրահավաք: Դրան կարող էին մասնակցել նաև մարդիկ, ովքեր Գերմանիայի քաղաքացիներ չէին, բայց ապրում էին Գերմանիայում: Ստորագրահավաքը կատարվում էր «Ժամանակն է դատապարտել ցեղասպանությունը» կոչով, որը մշակվել էր «Ճանաչում» աշխատանքային խմբի կողմից և հաստատվել «Գերմանիայի հայության կենտրոնական խորհրդի» կողմից:

Հավաքվեցին 5000 ստորագրություն, որոնք «Ցեղասպանության հակառակորդների միության» կողմից հավաքված 11000 ստորագրությունների հետ միասին կազմեցին 16000 ստորագրություն, ընդ որում՝ 10000-ը պատկանում էին Թուրքիայի քաղաքացիներին (թուրքեր, քրդեր): Անհրաժեշտ է նշել և խորին շնորհակալություն հայտնել արամեացիներին, որոնք մեծ օգնություն ցուցաբերեցին մեզ ստորագրահավաքի արշավի ժամանակ:

Բանակցություններ պառլամենտի անդամների հետ

Հանրագիրը ներկայացնելու ընթացքը տևեց ավելի քան մեկ տարի: Այդ ընթացքում «Ճանաչում» աշխատանքային խմբի ղեկավարները փոր-

ձում էին շփումներ հաստատել Բունդեստագի պատգամավորների հետ: Այդ աշխատանքը կատարվում էր Բեռլինում, հատկապես՝ Մարդու իրավունքների և միջազգային հարաբերությունների պառլամենտական հանձնաժողովների հետ: Ամփոփելով այդ աշխատանքների արդյունքները, կարելի է վստահորեն ասել, որ, ի տարբերություն 1987թ., պառլամենտի ոչ մի անդամ և ոչ մի հանձնաժողով 2000-2001թթ. Հայոց ցեղասպանության փաստի վերաբերյալ ոչ մի կասկած չէր արտահայտում, բայց տարբեր քաղաքական նկատառումներով հարցի քննարկումը տեղի չունեցավ, այն պատճառաբանությամբ, որ պառլամենտը պատմական հարցերով չպետք է զբաղվի: Այդ տեսակետի հետ, որի պաշտպանն է Ուլրիխ Քլոզեն, համաձայն չենք, քանզի այդ մոտեցումը հակասում է մարդու իրավունքների պաշտպանության սկզբունքներին և սպառնում է տարածաշրջանում վարվող քաղաքականությանը:

Բանակցություններ Բավարիայի Լանդտագում

2001թ. մայիսի 17-ին Բավարիայի պառլամենտի սահմանադրական և իրավապաշտպան հանձնաժողովը, իսկ հուլիսի 11-ին պառլամենտի լիագումար նիստը, պատգամավորներ Քրիստինա Շտալի, Էլիզաբեթ Քյոլերի և «Կանաչների միության» նախաձեռնությամբ քննարկեցին ասորիների դեմ Թուրքիայի կողմից գործադրված ոճրագործությունները: Այս առիթով Մյունխենի «Հայկական հարցերի հաստատությունը» կապվեց տիկին Քյոլերի հետ, որն այցելեց «Հայկական հարցերի հաստատություն» և համաձայնվեց, որ բողոքագրի մեջ ներառնվի նաև Հայոց ցեղասպանությունը:

Աշխատանք հասարակության հետ

2000 թվականին «Ճանաչում» աշխատանքային խումբը ցեղասպանության հանրագրի վրա հասարակության ուշադրությունը սևեռելու նպատակով կազմակերպեց մի շարք քարոզչական արշավներ: Այդպես՝ 2000 թվականի ապրիլի 9-ին կլոր սեղանի շուրջ տեղի ունեցավ մի զրույց, որը նվիրված էր Թուրքիայի՝ Եվրամիություն մտնելու խնդրին: Զրույցին հայկական կողմից մասնակցում էին Ա. Մանուչարյանը և Ա. Մարուխյանը:

2000թ. նոյեմբեր ամսին Բեռլինում կազմակերպվեց երեք շաբաթ տևողությամբ մի ցուցահանդես՝ «Մահվան ողբը» նշանաբանով, որտեղ ներկայացված էին Գերմանիայում ապրող հայ նկարիչների ստեղծագործությունները: Ցուցահանդեսին զուգահեռ կազմակերպվել էր մշակութային ծրագիր:

Զգալի աշխատանք է տարվել տեղեկատվական միջոցների հետ, որոնց վրա լուրջ ճնշում էին գործադրում թուրքական կողմի պաշտոնական և ոչ պաշտոնական հաստատությունները:

Դատավարություն

Միայն 2000 թվականի հոկտեմբեր ամսին Թուրքիայի տեղեկատվական միջոցները 6 ամիս ուշացումով իմացան «Ճանաչում» աշխատանքային խմբի՝ Բունդեստագին ներկայացված հանրագրի մասին: Այդ օրվանից ես՝ որպես հանրագրի ղեկավար, թուրքական տեղեկատվական միջոց-

ների կողմից մշտապես ենթարկվեցի հարձակումների և վիրավորանքների: Հարձակումներն ուղղված էին թե՛ իմ անձի, թե՛ իմ մասնագիտական որակի դեմ: Սակայն գլխավոր նպատակը թուրք իրավապաշտպանների հետ իմ կապերի խզումն էր: Միայն «Հուրիեթ» թերթի մի հրատարակության առիթով ես կարողացա օգտվել մամուլի օրենքից և հանդես գալ իմ նկատմամբ արված զրպարտանքների ու վիրավորանքների դեմ: Երկու տարի տևող դատավարությունից հետո ես շահեցի դատը, և Թուրքիայի տեղեկատվական խոշորագույն DGM DO an Media GmbH ընկերությանը պարտադրվեց հերքել զրպարտությունները և հատուցում վճարել այդ զրպարտությունների համար:

Անձնական եզրակացություններ

Ես՝ որպես գերմանացի ժողովրդի ներկայացուցիչ, որի կառավարությունն Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ռազմական համագործակցության դաշինք կնքեց կայզերական Գերմանիայի և երիտթուրքական վարչակարգի հետ և այդ համագործակցությունը դասեց ավելի բարձր, քան քաղաքական, բարոյական, իրավական և մնացած բոլոր սկզբունքները, իմ բարոյական պարտականությունն եմ համարում օգնել հայկական կազմակերպություններին, Գերմանիայի օրենսդիր իշխանություններից ստանալ հստակ պատասխան, թե ի՞նչ դիրք են նրանք գրավում Հայոց ցեղասպանության վերաբերյալ: Այդ նպատակի համար ես օգտագործեցի իմ բոլոր գիտելիքները և կապերը: Առավել ևս, հաճելի էր գիտակցել, որ հայերի հետ և հանուն հայերի կատարվող այդ աշխատանքն ակտիվ պաշտպանություն է գտնում իմ գործակից թուրք իրավապաշտպանների մոտ: Հենց այդ հարցում, ինչպես նաև՝ Թուրքիայի ազգայնականներից տուժած այլ ժողովուրդների հետ համագործակցության մեջ եմ տեսնում նման աշխատանքներ Գերմանիայում անցկացնելու եզակի երաշխիքը: Ոչ մի այլ երկրում պառլամենտի կողմից հայերի ցեղասպանությունը ճանաչելու նախաձեռնությունը չի ստացել այնպիսի միջազգային արձագանք, ինչպես Գերմանիայում:

Այնուամենայնիվ, ես համարում եմ, որ հայերի մասնակցությունն այս աշխատանքներին կարող էր լինել շատ ավելի բեղմնավոր: Կենտրոնական խորհրդից ես, օրինակ, սպասում էի, որ նա շատ ավելի մեծ մասնակցություն կբերի հանրագիրն իշխանություններին հանձնելու ընթացքում, և նրա անդամները կլուսաբանեն իրադարձությունների ընթացքը: Դրա համար կային բազմաթիվ հնարավորություններ, որոնք սակայն չօգտագործվեցին: Հավանաբար Կենտրոնական խորհուրդը չկարողացավ համոզել իր անդամներին, որ այդ քարոզչական աշխատանքները մեծ նշանակություն ունեն հանրագրի հաջողության համար, և Բեռլինում տարվող աշխատանքները Գերմանիայի այլ շրջանների հայերից պաշտպանություն չստացան:

Իմ այս քննադատական խոսքերը վերաբերվում են ոչ այնքան հայերի ընդհանուր կրավորական կեցվածքին, որքան հանրագրի տակ ստորագրություններ հավաքելու ընթացքին, որը լայն քարոզչություն վարելու հնարավորություն էր տալիս, բայց որից հայերն ըստ արժանվույն չօգտվեցին: Դեռևս 1999թ. նոյեմբեր ամսին ես առաջարկեցի քարոզչության նկատառումներով օգտագործել Բունդեստագի ընտրությունները, սակայն բացի Մյունխենի Հայկական հարցերի հաստատությունից, իմ այս կոչին ոչ ոք չարձագանքեց:

Եզրափակելով իմ այս հաշվետվությունը, ես կցանկանայի հայտարարել, որ ապագայում Հայոց ցեղասպանությունը ճանաչել տալու աշխատանքները Գերմանիայում պետք է ունենան կազմակերպական ավելի ամուր հիմքեր: Նախևառաջ, այն պետք է հենվի այն կազմակերպությունների և անձանց վրա, որոնք իսկապես զբաղվում են Հայոց ցեղասպանության խնդիրների վերագնահատման հարցերով, որոնք, սակայն, դուրս են գալիս գիտական ու տեսական գնահատականների դաշտից և ծանոթ են այդ խնդրի կիրառական կողմին, ունեն հասարակության և իրավապաշտպանների հետ աշխատելու փորձ: Այդ կազմակերպությունները և անձինք կարող են դառնալ մեր լավ օգնականները, եթե պատրաստ են համագործակցել Հայոց ցեղասպանությունը ճանաչելու մեր նախաձեռնությունների հետ: Հենց այս պատճառով ես ուրախ կլինեի, եթե այն կազմակերպությունները, որոնք թույլ կապեր ունեն մեր աշխատանքային խմբի հետ, ուժեղացնեին իրենց կապերը մեր հետ, ընդգրկվեին «Ճանաչում» աշխատանքային խմբի մեջ և այդ շարժումը դարձնեին ամուր միություն: Ըստ որում, չի կարելի նաև մոռանալ այն նախաձեռնությունների և կազմակերպությունների մասին, որոնց հետ մենք արդեն հաջողությամբ համագործակցել ենք անցյալում և ունեցել ենք վստահելի փոխհարաբերություններ:

Վերջում ուզում եմ նշել, որ նպատակահարմար է եվրոպական մակարդակով էլ ավելի սերտացնել մեր շփումները այն կազմակերպությունների հետ, որոնք իրենց երկրներում նման աշխատանքներ են նախաձեռնում: Ներկայումս նման կազմակերպությունների թվին են պատկանում հայկական կամ միջազգային ոչ կառավարական կազմակերպությունները Շվեյցարիայում, Հոլանդիայում, Շվեդիայում, որտեղ հետևելով հայերի փորձին, ասորական միությունները նույնպես փորձում են կազմակերպել իրենց երկրների պառլամենտների կողմից 1914-1918թթ. իրենց ժողովրդի դեմ գործադրված ոճրագործությունների ճանաչումը: Անհրաժեշտ է նաև համագործակցել Եվրոպական պառլամենտի և Եվրոպական հանձնաժողովի հետ:

Մեր աշխատանքների հաջորդ փուլը Գերմանական պառլամենտում և պառլամենտից դուրս գտնվող այն ուժերի որոնումն է, որոնց վրա մենք կարող ենք հենվել մեր աշխատանքներում: Եվրոպական փորձը ցույց է տալիս, որ հաճախ պառլամենտական փոքր սոցիալիստական կուսակցությունները պաշտպանում են ցեղասպանությունը ճանաչելու մեր նախաձեռնությունները: Ինչ վերաբերում է Գերմանիային, ապա այս դեպքում մենք կարող ենք պնդել, որ պառլամենտական որևէ ֆրակցիայի դռները մեր պահանջների առջև փակ չեն մնա:

Առանց բացառության, բոլոր կուսակցական ֆրակցիաները բաժանված են երկու մասի՝ նրանք, որոնք պատրաստ չեն զբաղվելու իրավապաշտպան հարցերով, որոնց արմատները գտնվում են անցյալում և նրանք, որոնք ունեն հակառակ տեսակետը: Նույնիսկ PDS-ն այս հարցի շուրջ չունի միանշանակ տեսակետ: Մեր օգնականների դերում կարող էին հանդես գալ նաև խոշոր եկեղեցիները և Թուրքիայի ոչ կառավարական կազմակերպությունները: